ԹԵՄԱ 3. ՎԵՐԱԿՈՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ XIX ԴԱՐՈՒՄ

§ 26. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼԸ

1 Արդյունաբերական ձեռնարկությունները տեղակայվում էին հին քաղաքներում, քանի որ դրանք գտնվում էին ծովային կամ ցամաքային առևտրական ուղիների հանգուցակետերում: Բացի այդ, քաղաքային բնակչությունը արդյունաբերական ապրանքների հիմնական սպառողն էր: Եթե ձեռնարկությունը տեղակայված էր լինում հանքավայրի մոտ, ապա դրա շուրջը ձևավորվում էր նոր քաղաք՝ բանվորների, հանքափորների և առևտրականների բնակավայրերից: Քաղաքային բնակչությունը աճում էր նաև գյուղից քաղաք տեղափոխվողների հաշվին, քանի որ քաղաքում աշխատանք գտնելը ավելի հավանական էր:

2 1869 թ. Սուեզի ջրանցքի գործարկմամբ կիսով չափ կրճատվեցին Անգլիայից Հնդկաստան տանող ծովային ուղու երկարությունը և տևողությունը: Թեև ջրանցքի շինարարությունը ֆինանսավորել էին ֆրանսիական բանկերը, Բրիտանիան 1875 թ. կարողացավ ձեռք բերել Սուեզի ջրանցքի բաժնետիրական ընկերության վերահսկիչ փաթեթը, իսկ 1882 թ. իր վերահսկողության տակ առնել Եգիպտոսը: Ռազմական բազաներ ունենալով Ջիբրալթարում, Մալթայում, Կիպրոսում և Ադենում, Բրիտանիան լիովին վերահսկում էր Սուեզի ջրանցքով և Միջերկրական ծովով Եվրոպան Հնդկաստանին կապող ծովային ուղին: